ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

31.01.2023 թ. ք. Իջևան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցում էին գիտական խորհրդի նախագահ Ա. Մարգարյանը, քարտուղար Ա. Ալեքսանյանը, Գ. Հովհաննիսյանը, Թ. Վարդանյանը, Ա. Պոտոսյանը, Գ. Ալեքսանյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Պ. Ասլիբեկյանը, Գ. Ավետիսյանը, Դ. Աֆյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Թ. Ջանվելյանը, Լ. Մնացականյանը: Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մարգարյանը:

Օրակարգ

1. Հաղորդում 2022-2023 ուստարվա II կիսամյակի ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների մասին (Զեկ. Ա. Մարգարյան):
2. Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի և աշխատանքների կատարման ժամանակացուցերի հաստատում (Զեկ. Թ. Վարդանյան):
3. Ֆակուլտետի գիտական խորհրդի 2022-2023 ուստարվա II կիսամյակի աշխատանքների պլան-ժամանակացույցի քննարկում և հաստատում (Զեկ. Ա. Մարգարյան):
4. I կիսամյակում իրականացված հետազոտական բաղադրիչի արդյունքների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունների ներկայացում (Զեկ. Գ. Հովհաննիսյան, Ա. Մարգարյան):
5. 2022-2023 ուստարվա II կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների թեկնածության քննարկում (զեկ. Ա. Մարգարյան):
6. Ընթացիկ հարցեր.
   6.1. Հաղորդում «Տավուշի մարզի գյուղական տարաբնակեցման զարգացման արդի միտումները և առկա հիմնախնդիրները» թեմայով ԵՊՀ ԻՄ ներքին դրամաշնորհի կատարման հաշվետվության:
   6.2. Գործարար վարչարարություն (կառավարում) մագիստրոսական կրթական ծրագրի հայտի քննարկում (զեկ. Ա. Մարգարյան):

Բաց քվեարկությամբ 13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

¬ Հաստատել նիստի օրակարգը:

1. *Լսեցին.- Հաղորդում 2022-2023 ուստարվա II կիսամյակի ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների մասին (զեկ. Ա. Մարգարյան):*

Ա. Մարգարյանը հաղորդեց, որ 2022-2023 ուստարվա II կիսամյակի ուսումնական գործընթացները արդյունավետ կազմակերպելու նպատակով Ֆակուլտետում իրականացվել են մի շարք աշխատանքներ.

- Ֆակուլտետում գործող երկու ամբիոններում իրականացվել է 2022-23 ուստարվա II կիսամյակի չբաշխված ժամերի բաշխում: Դրա վերաբերյալ զեկուցագրեր են ներկայացվել համապատասխան բաժիններ:
- Կազմվել են ֆակուլտետում գործող երկու մասնագիտությունների գծով 2022-23 ուստարվա II կիսամյակի դասատախտակները՝ ըստ տվյալ կիսամյակում դասավանդվող դասընթացների: Դրանք քննարկվել են մյուս ֆակուլտետների պատասխանատուների հետ՝ զուգադիպումներից խուսափելու նպատակով:
- Ըստ ամբիոնների՝ բոլոր դասախոսներին էլ.փոստով ուղարկվել են անհատական բեռնվածությունները, դասավանդվող դասընթացների թեմաները՝ ըստ համապատասխան կրթական ծրագրերի:
- Ֆակուլտետի գիտական խորհրդում նախատեսվում է քննարկել անվանական կրթաթոշակի հավակնորդների ցուցակը,
- Ամբիոններում իրականացվել են քննարկումներ պրակտիկաների ծրագրերի և դրանց արդյունավետ իրականացման վերաբերյալ,
- Ամբիոնները ուշադրության կենտրոնում են պահում ավարտական աշխատանքների կատարման ընթացքը, ավարտական կուրսի ուսանողներին և ղեկավարներին է տրամադրվել ԵՊՀ ԻՄ բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման վերանայված կարգը:

Արտահայտվեցին.- Գ. Հովհաննիսյանը

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.8 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- 2022-2023 ուստարվա II կիսամյակի ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների մասին հաղորդումը ընդունել ի գիտություն:

2. Լսեցին.-Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի և աշխատանքների կատարման ժամանակացույցերի հաստատման մասին (զեկ. Թ. Վարդանյան, Ա. Սարիբեկյան):

Զեկուցողները ներկայացրին «Ֆինանսներ» (ըստ ոլորտի) և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի և աշխատանքների կատարման ժամանակացույցերը: Նրանք նշեցին, որ նախ կազմվել է աշխատանքային խումբ, որն էլ իրականացնելու է աշխատանքները՝ առաջնորդվելով ըստ ժամանակացույցի: Նրանց կարծիքով, աշխատանքների իրականացումը հնարավորություն կտա աշխատաշուկայի համար պատրաստել առավել որակյալ մասնագետներ, որն էլ կնպաստի ԵՊՀ ԻՄ-ի վարկանիշի բարձրացմանը:

Արտահայտվեցին.- Գ. Հովհաննիսյանը

Արտահայտվողը նշեց, որ անհրաժեշտ է դասախոսների, ուսանողների համագործակցումը աշխատանքային խմբի հետ: Դա կհանգեցնի աշխատանքների արդյունավետության և հիմնավորվածության խորացմանը: Նա արժևորեց գործատուների հետ հանդիպումների կազմակերպումը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. -Հաստատել կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի և աշխատանքների կատարման ժամանակացույցերը:

3. Լսեցին.-Ֆակուլտետի գիտական խորհրդի 2022-2023 ուստարվա II կիսամյակի աշխատանքների պլան-ժամանակացույցի քննարկման և հաստատման մասին (զեկ. Ա. Մարգարյան):

Ա. Մարգարյանը ներկայացրեց ֆակուլտետի գիտական խորհրդի 2022-2023 ուստարվա II կիսամյակի աշխատանքների պլան-ժամանակացույցը: Նա նշեց, որ ֆակուլտետի գիտխորհրդի աշխատանքային պլանի կազմման նպատակը ֆակուլտետի գիտխորհրդի գործունեության կանոնակարգումն է: Այդ փաստաթուղթը շեշտադրում է այն խնդիրները, որոնք ընթացիկ ուսումնական տարում կլինեն ֆակուլտետի գիտխորհրդի գործունեության առանցքում: Այն թույլ կտա ավելի ուղղորդված և համակարգված իրագործել ֆակուլտետի ռազմավարական ծրագիրը: Ֆակուլտետի համար առաջնահերթ նշանակություն ունեցող այս փաստաթղթի մշակումը կհանգեցնի մյուս օղակների, մասնավորապես ամբիոնների, աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը:

Այնուհետև զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի գիտխորհրդի 2022-2023 ուստարվա II կիսամյակի աշխատանքների պլան-ժամանակացույցը:

Արտահայտվեցին - Թ. Վարդանյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.8 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին – Հավանություն տալ ֆակուլտետի գիտական խորհրդի 2022-2023 ուստարվա II կիսամյակի աշխատանքների պլան-ժամանակացույցին և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

4. ***Լսեցին. - I կիսամյակում իրականացված հետազոտական բաղադրիչի արդյունքների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունների ներկայացում (Զեկ. Գ. Հովհաննիսյան, Ա. Մարգարյան):***

Ա. Մարգարյանը նշեց, որ առաջին կիսամյակում «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» մասնագիտության աշխատանքային ուսումնական պլանով հետազոտական բաղադրիչ են ունեցել հետևյալ դասընթացները. Էկոնոմետրիկա-2, Ֆինանսներ-2, Հանրային ֆինանսներ: Ընդհանուր առմամբ, արդարացված է նշված դասընթացներում հետազոտական բաղադրիչների կիրառումը: Դասավանդողները հետազոտական աշխատանքների կատարման ընթացքը դրական գնահատեցին և նշեցին, որ այն արդարացված էր: Հիմնականում ուսանողները գնահատվել են առավելագույն միավորներով:

Գ. Հովհաննիսյանը հաղորդեց, որ այս կիսամյակ Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնում հետազոտական բաղադրիչով դասընթացները երկուսն են, որոնք իրականացվում են Զբոսաշրջություն ԿԾ երրորդ կուրսում: Նախորդ տարվա հետ համեմատելով՝ կարելի է արձանագրել, որ այս տարի հետազոտական աշխատանք կատարելու ուսանողների հմտությունները աճել են: Աշխատանքները վերահսկվել են ամբիոնի կողմից և արդյունքները քննարկվել են ամբիոնում:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.-I կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

5.Լսեցին- 2022-2023 ուստարվա II կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների թեկնածության քննարկման մասին (զեկ. Ա. Մարգարյան):

Դեկանը ներկայացրեց մասնաճյուղում գործող անվանական կրթաթոշակների հատկացման կարգն ու պայմանները: Այն տրվում է առավել աչքի ընկած, գերազանց առաջադիմություն և բարձր հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողին, որպես ֆինանսական խրախուսանք: Անվանական կրթաթոշակի հավակնորդին առաջադրված պահանջները բավարարում են հետևյալ ուսանողները:

«ԵՊՀ» անվանական կրթաթոշակի ներկայացվեց «Ֆինանսներ» (ըստ ոլորտի) կրթական ծրագրի առկա ուսուցման երրորդ կուրսի ուսանողուհի Մարգարիտա Արմանի Առաքելյանը:

«Շավարշ Մարգարյան» անվանական կրթաթոշակի հավակնորդ է «Ֆինանսներ» (ըստ ոլորտի) կրթական ծրագրի երրորդ կուրսի ուսանողուհի Ռուզաննա Արմենի Բաբուռյանը:

«Արտակ Յուցուլյան» անվանական կրթաթոշակի հավակնորդ է «Ֆինանսներ» (ըստ ոլորտի) կրթական ծրագրի առկա ուսուցման չորրորդ կուրսի ուսանողուհի Նարե Միսակի Օթարյանը:

«Արցախյան 44 օրյա պատերազմում անմահացած ուսանող» անվանական կրթաթոշակի ներկայացվեց, «Ֆինանսներ» կրթական ծրագրի չորրորդ կուրսի ուսանողուհի Ռուզան Սմբատի Խառատյանը:

«Սահակ Զորափորեցի» անվանական կրթաթոշակի ներկայացվեց «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի երրորդ կուրսի ուսանողուհի Ագնեսա Արսենի Դալլաքյանը:

«Իջևան» անվանական կրթաթոշակի հավակնորդ է «Ֆինանսներ» (ըստ ոլորտի) կրթական ծրագրի առկա ուսուցման չորրորդ կուրսի ուսանողուհի Մանե Վահանի Փիրումյանը:

Արտահայտվեցին.- Պ. Ասիլբեկյանը, Ա. Սարիբեկյանը:

Գիտխորհրդի կազմը հավանության արժանացրեց 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդ-թեկնածուների կազմը և միաձայն քվեարկությամբ երաշխավորեց ներկայացնել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանը:

Ղեկավարվելով ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի 34 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հավանության արժանացնել 2022-2023 ուստարվա II կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդների թեկնածությունները և ներկայացնել տնօրինության հաստատմանը:

6. Ընթացիկ հարցեր

6.1.Լսեցին-Հաղորդում «Տավուշի մարզի գյուղական տարաբնակեցման զարգացման արդի միտումները և առկա հիմնախնդիրները» թեմայով ԵՊՀ ԻՄ ներքին դրամաշնորհի կատարման հաշվետվության մասին (զեկուցող՝ Ա. Պոտոսյան):

Ա. Պոտոսյանը հայտնեց, որ 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակում ԵՊՀ ԻՄ-ում հայտարարված ներքին դրամաշնորհային մրցույթի արդյունքում դրամաշնորհ է տրամադրվել

«Տավուշի մարզի գյուղական տարաբնակեցման զարգացման արդի միտումները և առկա հիմնախնդիրները» ծրագրին:

Հաշվետու ժամանակաշրջանում (01.11. 2022թ.-ից 01.02.2023թ.) խմբի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Շարունակվել են Տավուշի մարզի գյուղական բոլոր բնակավայրերի բնակչության վերաբերյալ անհրաժեշտ վիճակագրական տվյալների հավաքագրման և ճշգրտման աշխատանքները:
2. Կարևորություն է տրվել մարզի սահմանամերձ գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների ուսումնասիրությանը և առկա միտումների բացահայտմանը:
3. Առանձնակի կարևորություն է տրվել ինչպես ամբողջ Տավուշի մարզի, այնպես էլ նրա տարածաշրջանների և բնակավայրերի վերաբերյալ կառավարության որոշումներին և մարզի կողմից դրանց կատարման ընթացքին ու արդյունքներին:
4. Շարունակվել են Տավուշի մարզի գյուղական տարաբնակեցման և առանձին բնակավայրերի վերաբերյալ փաստական ու վիճակագրական տվյալների ձեռքբերման, դրանց մշակման, ամփոփման և ընդհարացման ուղղությամբ աշխատանքները: Խմբի անդամներ Ս. Սաֆարյանի և ուսնող-կատարող Ի. Սարիբեկյանի կողմից անհրաժեշտ նյութեր և տվյալներ են հավաքվել և մշակվել Տավուշի առանձին գյուղական բնակավայրերի աշխարհագրական նկարագրի՝ մասնավորապես, դրանց սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական իրավիճակի վերաբերյալ:
5. Ծրագրի իրականացման այս փուլում իրականացվել է նաև մարզի գյուղական տարածքների և բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման և ժողովրդագրական գործընթացներում տեղի ունեցող փոփոխությունների և զարգացման առկա միտումների վերլուծություն, վեր են հանվել առկա հիմնախնդիրները:

Գիտական խորհուրդը միաձայն քվեարկությամբ հավանություն տվեց ներկայացված հաշվետվությանը:

Որոշեցին- 1. ԵՊՀ ԻՄ ներքին դրամաշնորհի «Տավուշի մարզի գյուղական տարաբնակեցման զարգացման արդի միտումները և առկա հիմնախնդիրները» եռամսյա հաշվետվության հաղորդումն ընդունել ի գիտություն,

6.2. Լսեցին. - Գործարար վարչարարություն (կառավարում) մագիստրոսական կրթական

ծրագրի հայտի քննարկման մասին (զեկ. Ա. Մարգարյան):

Ա. Մարգարյանը հաղորդեց, որ ֆակուլտետում նախատեսվում է գործարար վարչարարություն (կառավարում) մագիստրոսական կրթական ծրագրի ներդրում, որի նպատակը բիզնեսի ոլորտի մրցունակ կառավարիչների՝ մենեջերների պատրաստումն է: Ծրագիրը գրավիչ կլինի ոչ միայն ԵՊՀ ԻՄ ուսանողների, այլև՝ բոլոր մակարդակի մենեջերների և ձեռնարկատերերի համար, ինչպես նաև բոլոր այն մարդկանց համար, ովքեր ցանկանում են զարգացնել իրենց կառավարչական հմտություններն ու տիրապետել ժամանակակից կառավարման գործիքներին:

Գործարարության վերաբերյալ ստացած ակադեմիական ու պրակտիկ գիտելիքները թույլ կտան շրջանավարտներին գտնել իրենց տեղը բիզնես աշխարհում, ինչպես նաև դառնալ պրոֆեսիոնալ մենեջերներ, աշխատանք գտնել տարբեր կորպորացիաներում, հոլդինգներում պետական համակարգերում, ֆինանսական և բանկային կառույցներում: Այն հնարավորություն կտա նաև ստացած գիտելիքների հիման վրա հիմնել սեփական բիզնես և դառնալ գործատու, ինչը Տավուշի մարզում և հարակից մարզերում կնպաստի նաև փոքր ու միջին բիզնես ոլորտի զարգացմանը:

Ա. Մարգարյանը հավելեց, որ վերոնշյալին հասնելու համար անհրաժեշտ է բարձր որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ, ինչը կապահովվի մասնաճյուղի ղեկավար կազմի և ամբիոնի համատեղ ջանքերով (մայր բուհի փորձառու մասնագետներ, ՀՀ ԿԲ, ֆինանսաբանկային համակարգի, ՀՀ ՊԵԿ մի շարք փորձառու աշխատակիցներ):

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.5 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - Ընդունել Գործարար վարչարարություն (կառավարում) մագիստրոսական կրթական ծրագրի հայտը և ներկայացնել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանը:

Գիտական խորհրդի նախագահ՝	*Ա. Մարգարյան*
Քարտուղար՝	*Ա. Ալեքսանյան*